

Եթե մենք ապրում ենք միայն ներկայի համար — մոռանում ենք ապագայի մասին, փորձությունները կդառնան մեզ՝ ավելի լավը դարձնելու փոխարեն:

## Ուորեն Վ. Ուիրսի

*Ինչպես եք խրախուսվել այլ մարդկանց համբերությամբ փորձությունների ժամանակ:*

ՀԱՐՑ #4

### Հակոբոս 1:4

Համբերությունը ժամանակ է պահանջում: Համբերությունը զարգանում է ամենօրյա գործողությունների միջոցով: Համբերությունը պետք է առաջնորդվի Աստծո կողմից: Հակառակ դեպքում այն չի հասնի իր նպատակին. այն անկատար և թերի կլինի: Ես պետք է թույլ տամ, որ համբերությունը ձևավորի և ձուլի ինձ, մինչև որ կատարյալ դառնամ: Եթե հնազանդվեմ համբերության գործընթացին և թույլ տամ, որ իմ հավատքը ձևավորվի և զորանա, ի վերջո ես կհասնեմ նպատակին՝ ես կատարյալ և ամբողջ կլինեմ, և ոչնչի պակասություն չեմ ունենա:

Ես կարող եմ հակառակվել համբերության աշխատանքին իմ կյանքում և պայքարել դրա դեմ: Ես կարող եմ փախչել դրանից՝ դեպի փորձություններից ազատ կյանքը: Ես կարող եմ չսովորել՝ խուսափելով այդ դժվարությունից, բայց այն փաստը, որ ես չեմ հանձնի քննությունները, ինքնին դժվարություն կպատճառի ինձ: Ես կարող եմ չմարզվել մինչև մրցումները, բայց նաև չեմ հաղթի: Ես կարող եմ թույլ չտալ, որ Աստված կատարելության հասցնի ինձ, բայց նույնպես չեմ իրականացնի այն ամենը, ինչի համար Նա կանչել է ինձ: Ո՞րն է պակաս ցավոտ: Երկու ճանապարհներն էլ կարող են ցավոտ լինել, բայց դրանցից մեկը բերում է աննպատակ ցավ և տրտմություն՝ զուր տեղը վատնած կյանքի համար: Այնուամենայնիվ, այն ցավը, որին մարդը դիմանում է փորձությունների ժամանակ, և՛ դրական է, և՛ առաջադիմական. քանի որ ավարտվում է երջանկությամբ և բավականությամբ:

Աստված գործում է ձեր շուրջը, որպեսզի կարողանա գործել նաև ձեզանում և ձեր միջոցով: Նա առաջնորդում է ձեզ դեպի լիարժեք կատարելությունն Իր մեջ: Ընդունեք Նրա աշխատանքը ձեզանում. դարձեք բաց, հնազանդ, խոնարհ և սովորելու պատրաստ:

- ◆ **Կատարյալ – Նպատակին հասած, ամբողջական, հասուն, լիովին զարգացած:**
- ◆ **Ամբողջական – Լիովին զարգացած, ողջ կարողությամբ գործող, երբ ոչինչ չօգտագործված չի մնում:**
- ◆ **Ոչ մի բանի պակասություն չունեցող – Ոչինչ բաց թողնված կամ անտեսված չէ: Դուք լիովին սպառազինված և պատրաստված եք:**

